



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



~~542-3~~
~~64~~

№ 1 Հրատ. «Ա. ս. ք. Ա. է. ՚» ի № 1

Շ Ի Ր Ա Կ Ե Յ Ի

ԵՐԿՈՒ ԵՂՐԱՅՐ

ՊԱՏԿԵՐ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Գ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ «ԱՐՐՐ» Տ. ՆԱԳԱՐԵԱՆԻ

1892

Handwritten text at the top of the page, including a date stamp: 26 NOV 2011

№ 1 Հրատ. «Ասք-Աւետ»ի № 1

91.542-3

Շ-64 ՇԻՐԱԿԵՑԻ
ԱԱ.

Handwritten signatures and notes on the right side of the page.

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ

ՊԱՏԿԵՐ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

505

Գ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ «ԱՐՈՐ» Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
1892

15 JUL 2013
1000 YOK 3

97653

ԻՆՐ ՍԻՐԵԼԻ ԵՂՐՕՐ՝

ՊԵՏՐՈՍ ԵՍԱՅԵԱՆ ԲԷՌՈՒՐԵԱՆՑԻՆ

Дозв. ценз. Тифлисъ 30-го Іюля 1892 года.
Тип. „АРՐԲ“, Т. Я. Назарьянъ, Барятин. ул.

խորին երախտագիտուքեամբ

ՆՈՒԻՐՈՒՄ Է



ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ

ՊԱՏԿԵՐ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ:

Ա.

Նրանցիկ է այնմարդը, որ Աստուծուն կ'վահնայ եւ նրա պատուիրանները կը պահէ. այդպիսի մարդու սերունդը պիտի օրհնուի. նրա տունը առատութեամբ եւ լիութեամբ պիտի ճոխանայ. նրա կենանքը երկար եւ անուշ կըլինի եւ յիշատակը յաւիտեան օրհնեալ. (Սողոմոն մծ. 1)



րարատեան աշխարհի նահանգական քաղաքներից մէկում լայն փողոցի վերայ մինչեւ այժմ էլ կայ մի սիրուն երկյարկանի քարեայ շինութիւն: Այդ տունը մի ժամանակ պատկանում էր յայտնի վաճառական Պ. Թովմաս Մարալեանին:

Պ. Թովմաս Մարալեանը յայտնի էր ամբողջ Արարատեան աշխարհին որպէս ժիր, առաքինի մարդ, որպէս ազնիւ վաճառական, որպէս ընդունակ գործող: Նա յա-

բաբերութիւն ունէր ինչպէս Հայ վաճառականների, նոյնպէս Պարսկաստանի և Ռուսաստանի բոլոր նշանաւոր Ֆիրմաների և գործարանների հետ. և ամեն տեղ, ամենի մօտ անասհման Հաւատարմութիւն ունէր: Նա ինքը ունէր ընդամենը 40 հազար բուբ. գրամադրուխ. սակայն ուրիշները այն կարծիքին էին, թէ նա կուենեայ առնուազը 200 հազար բուբլի: Ինչ և իցէ. պ. Մարալեանի գործերը ընթանում էին շատ յաջող և ինքը էր վիճակից շատ գոհ կըլինէր, եթէ մի խոշոր պակասութիւն չունենար: Այդ մեծ պակասութիւն այն էր, որ պ. Մարալեանը տղայ չունէր. և իրօք այդ քիչ պակասութիւն չէր ռւմ համար եմ աշխատում, ռւմ համար եմ ձգտում, ինչս է մնացել՝ ինքն իրան զանգաւում էր պ. Մարալեանը: Նա արդէն 45 տարեկան էր և 25 տարի էր որ ամուսնացած էր: Նրա ամուսինը, առաքինի և բարեպաշտ տիկին Համասիլուռը, քաղաքի մէջ ամենայաւ տիկիւններից մէկն էր թէ պարկեշտութեամբ թէ գեղեցկութեամբ: Տիկին Մարալեանը շատ անգամ ուխտ էր գալիս Շիրակի հռչակաւոր Եօթը-Վերաց, հրաշագործ Աստուածածնի պատկերին: Նա գնում էր և այլ ուխտատեղեր ու ջերմուկներ: Տիկին Մարալեանի առաջին խնդրուածքն այն էր, որ Աստուած բարեհաճի իրանց մէկ զաւակ պարգևել՝ ինչպէս պարգևեց Աբրահամին ու Սարգային կամ ինչպէս Զաքարային ու Եղիսաբեթին, որոնք նոյնպէս ծերացել էին և զաւակ չունենալու պատճառաւ շատ տրտմում էին: Տիկին Մարալեանը հաւատով կին էր. նա գիտէր և կըհաւատար,

որ Աստուած իր ձայնը պէտք է լսէ և զաւակներ ու-
ունենայ: Հաւատքը այնքան մեծ զօրութիւն ունի, որ
անկարելին կարելի կանէ և շատ անգամ մենք ամենքս
էլ ուղիղ հաւատքով խնդրածներս միշտ ստացել ենք և
կըստանանք՝ միայն եթէ հաւատանք:

Բ.

*Քաջալեռնաց, դուտր, հաւատք քո
կնցուցին զքեզ. (Մատթ. Թ. 22).*

1860 թուի Սեպտեմբերի 14-ին ս. Խաչի վերացման
տօնի օրն էր: Պ. Մարալեանի տունը սովորականից ա-
ւելի կենդանութիւն էր ստացել: Մեծ բազմութիւն բա-
րեկամների, ազգականների և ծանօթների եկել էին «աչ-
քալոյսի» և իրօք մեծ աչքի լոյս էր պ. Մարալեանի
համար. որովհետև իր ամուսնութեան 25-րդ տարեգար-
ձին Աստուած պարգևեց իրան ոչ թէ մէկ, այլ երկու
զաւակ, երկուսն էլ արու, երկուսն էլ սիրուն, կայտառ:

Նոյն օրը քաղաքի ս. Խաչի եկեղեցում կատարեցին
նորածին Մարալեանների մկրտութեան խորհուրդը: Եր-
կու սիրուն մանուկներ՝ ի միասին աւագան դրին ս.
դրոշմ տալու ժամանակ: Կնքահայրը պ. Արծիւեանը մէ-
կին անուանեց Արշակ, միւսին Վաղարշակ:

Պ. Թովմաս Մարալեանը ոչ մի օր այդ աստիճան
ուրախ չէր եղել, ինչպէս այդ օր. նա իր ոտքով ծառա-
յութիւն էր անում, բարեկամներ ընդունում, «աչքի

լոյս» տւողներին շնորհակալութեամբ պատասխանում և
ամենքին գոհութեամբ ներս հրաւիրում:

Երեկոյեան պ. Մարալեանի տունը նմանում էր մեծ
հարսնետան: Հարսանիքից էլ աւելի շքեղ էր նորածին
Մարալեանների մկրտութեան հանդէսը. մօտ 200 մար-
դիկ եկած էին. եկած էր նաև նահանգապետը և Հայոց
թեմակալ առաջնորդը: Ասիական և եւրոպական երա-
ժշտութիւնը զմայլեցնում էր հետաքրքիր դրացիներին,
որոնք խորին հոգեզմայլութեամբ մտիկ էին տալիս:
Խնձոյքը աւելի ճոխ և շռայլ էր, քան թէ շատերը սպա-
սում էին պ. Մարալեանից: Շամպանիա գինին հասա-
րակ գինու պէս էր բացւում. խկ գինին ջրից էլ առատ
էր: Երբ սեղանի կառավարիչը առաջարկեց խմել երկու
նորածինների կենացը, պ. Թովմաս Մարալեանը վերցնե-
լով շամպանիայի թասը՝ խօսեց այսպէս.

«Սրբազան Հայր, և յարգելի հիւրեր. այսօր ես ինձ
շատ բախտաւոր եմ համարում, որ իմ 45-րդ տարւոյս
մէջ բազդ եմ ունեցել այս ուրախալի կենացը խմելու:
Որքան որ բազդաւորութիւն է ունենալ զաւակներ,
այնքան և աւելի երջանկութիւն է մի մարդու, երբ իր
զաւակը պիտանի անգամ կլինի ազգին. տայ Աստուած,
որ մեր նորածիններն ապրին, զօրանան, Աստուծոյ շնոր-
հով լինին օգտաբեր զաւակներ հայրենեաց: Կեցցենք
ծափահարութիւնը թնդադրեց դահլիճը, որով խիստ
զգացուեցաւ պ. Մարալեանը: Երաժշտութիւնը նուազեց
»՝ ի բիւր ձայնից» երգը: Պ. Մարալեանը իր կենաց այդ
ուրախալի ժամը յաւերժացնելու նպատակով 500 ռուբլի

լատկացրեց որք և չքաւոր ուսանողներն օգտին: Հանգիսականները կրկին անգամ ծափահարեցին պ. Մարալեանի այդ բարի գիտաւորութիւնը և բարեգործութիւնը: Լսելով որ բարի նպատակի համար է, գեներալ նահանգապետը իր կողմից էլ աւելացրեց 100 ռ. և այսպէս ուրիշները. այնպէս որ այդ օրը հաւաքուեցաւ 1000 ռ. լուսաւորութեան գործի համար: Ա՛րքան մայրեր ուրախացան, երբ լսեցին այդ բարի նպատակը, որքան օրհնեցին պ. Մարալեանին և նրա նորածիններին:

Հանդէսը վերջացաւ գեշերուայ ժամը 4-ին, Հիւրերից շատերը մինչև լոյս կեցան պ. Մարալեանի պարտէզում, ուր պարում էին զանազան պարեր: Առհասարակ նորածին Մարալեանների մկրտութեան հանդէսը շատ շքեղ և ուրախ անցաւ: Իսկ տիկին Մարալեանի արարութիւնը չափից ու սահմանից անցել էր: Նա մուսացաւ այն տանջանքը, որ կրեց երկունքի ժամանակ: Նա իրան շատ բաղտաւոր էր համարում, որ Աստուած լսեց իր խնդիրքը: Նորածիններն օր աւուր աճում ու զօրանում էին:

Գ.

Միրեցէլ ուսումը, սիրեցէլ անասման սիրով, վասն զի ուսումը աղամտնորէն պատուական է. գոյարմ ու ոսկին ուսման դէմ ոչինչ են. ուսում սիրողը եւ գոյնողը տնուշ կեանք կը գտնէ եւ տիրողէն շնորհ կը ստանայ.

Նորածին Մարալեանները շատ սիրուն և կայտառ էին: Նրանք, և ինչպէս առհասարակ բոլոր երկուորեակ-

ները շատ նման էին իրար: Իրացիներից շատերը համարեա չէին ճանաչում, թէ որն է Արշակը և որը Վազարշակը: Երկունս էլ շէկ մազերով, լայն ճակատով, կուպոյտ, պայծառ աչքերով, կլոր երեսով, լիքը այտերով էին: Նրանք աւելի գուրեկան եղան, մանաւանդ իրանց երբորդ տարում, երբ սկսեցին մանկական թոթով խօսակցութիւնը: Ծնողները հիանում էին, տեսնելով այդ զոյգ սիրուն մանուկներին, որոնք ինչպէս անմեղ գառնուկներ խաղում էին մանկական անուշութեամբ: Տ. Մարալեանը կարել էր նրանց համար բաց կապոյտ գոյնի թաւշեայ շալիկներ, նաւապետի հագուստի ձևով: Գրկներին դնում էին լայն եզր յարդեայ գլխարկներ, ոտքերին հաղնում էին Վարշակի սիրուն կոշիկները և այսպէս հագնուած Տ. Մարալեանը իր ձագերի հետ առօք-փառօք ժամ էր գնում:

Պ. Մարալեանի սիրտը լցում էր անսահման բերկրութեամբ, երբ նայում էր իր կնոջը և զաւակներին: «Փառք Բեզ, Աստուած, ասում էր պ. Մարալեանը «Ի՞նչ իմ խնդիրը լսեցիր, ինձ զաւակներ պարգևեցիր, այժմս էլ աղաչում եմ Բեզ, Տէր, Դու նրանց պահէ, պահպանէ, փորձանքներէ ու չարութենէ ազատ է: Քո սուրբ շնորհքն ու սէրը պարգևէ, Տէր, թող աճին քո սուրբ կամօք, զարգանան Քո շնորհաց մէջ»: Անցաւ այդ օրից հինգ տարի: Տղոց ութ տարին լրացաւ: պ. Մարալեանը ցանկացաւ իր տղոց ուսման տալ:

1868 թուի սեպտ. 14-էր պ. Մարալեանը այդ օրը ճաշի էր հրաւիրել Հայոց դպրոցի Տեսուչ պ. Սէթ-

եանին: ձաշի ժամանակ յայտնեց, որ միտք ունի իր տղոցը տալ դպրոց և խնդրեց, որ ընդունեն: Պ. Տեսուչը յայտնեց, որ պէտք է գրաւոր խնդիր տալ դպրոցի Հոգաբարձութեանը և յայտնեց որ ուրախութեամբ կընդունուին:

Հետեւեալ օրը փոքրիկ Մարալեանները դպրոց գնացին: Դպրոցի մէջ երկու եղբայրներն էլ շուտով առաջագէտ աշակերտների կարգն անցան: Նրանք ունէին անուշ բնաւորութիւն և սուր միտք. լաւ ըմբռնում էին վարժապետի ասածները, ունէին խելօք վարք և դպրոցի կարգի ու կանոնի հնազանդութիւն: Այդ տարին փոխեցին երկուսն էլ դասարանները: Տղոց խելօքութիւնը և նոցա ստացած առաջին վկայականները շատ ուրախացրին ծնողաց սրտերը: Բարեկամներից շատերը ուրախանում էին, տեսնելով մանուկ Մարալեանների ազնիւ վարքը, շատերը նախանձում էին պ. Մարալեանի բաղդին:

Գ.

*Որդի իմաստուն ուրախ սունե՛ գնայր՝
ամսիտ տրամութիւն է մօր (ստակ. Ժ. V)*

Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս դպրոցի մէջ էլ կըլինեն խելօք ու չար տղաներ: Յաւալին այն է, որ ազնիւ, խելօք տղոց թիւը աւելի քիչ է, քան թէ այն չար տղոց, որոնք զուրկ լինելով ընտանեկան դաստիարակութիւնից յայտնի են իրանց չարութեամբ, անառակութեամբ և անբարոյական գործերով, վերջին տեսակի տղոց մէկն էր պ. Մարալեանի քրոջ որդին Գալուստ Սլիկեանը:

Մարալեանների դպրոց մտած օրից այդ բանսարկուն հետեւում էր, որ Արշակին ու Վաղարշակին էլ իրան պէս անբարոյական դարձն է: Գ. Սլիկեանը և ընկերները այն տեսակ տղաներից էին, որոնք իրանց ոսկի ժամանակը կորցնում էին խաղի, խաղալիքի, սրախօսութիւններ և հայհոյութիւններ սովորելու, ծեծելու և ծեծկէլելու մէջ, մէկ խօսքով այն, ինչ ոչ հակառակ է իրանց ծնողաց կամքին և դպրոցի կանոններին:

Մի օր այդ տեսակ տղաներից մի քանիսը, որոնց մէջ նաև Սլիկեանը շրջապատեցին Մարալեաններին ասելով. «Քնչ հեռու, հեռու ման կսւգաք, չէք տեսնի թնչ անուշ օր է. գնում ենք գետը լողանալու, դուք էլ չէք գալ» — Ոչ, մենք գետը չենք գալ, ասաց Վաղարշակը. մենք տուն ենք գնում, մեզ սպասում են:

— Գիտեմ, որ ձեզ սպասում են, բայց մենք մի տղի հետ տանը լուր կտանք, թէ գնացինք գետը,

— Զէ, չեմ ուզում, ասաց Վաղարշակը վճռողաբար:

— Արշակ ջան, դո՛ւ արի, գնանք, թող Վաղօն չ'գալ, տես թնչ հիանալի օր է ասաց բանսարկու Սլիկեանը և համարեա զօռով քաշ տուեց իր հետ:

— Արշակ, մի գնա, արի՛ գնանք տուն. հայրիկը մեզ սպասում է ասաց Վաղարշակը: Արշակը լսեց եղբօր խօսքը. և ուզում էր լետ գալ, սակայն ընկերները ստիպեցին ասելով «Քնչ կայ, սօ, խօմ ծծկեր երեխայ չես... Արշակը, որ թօյլ էր, և չուներ իր մէջ հաստատուն կամք. ոչխարային միամտութեամբ հետեւեց իր բանսարկու ազգականին և նրանք առաջ գնացին:

— Արշակ, մի գնա. արի, Հայրենիք կրճեճէ, ստիպեց Վաղարշակը, բայց Արշակը չբռնեց, նրա աչքում այդ րոպէին ոչ Հայրենիք ունէր նշանակութիւն և ոչ հօր ծեծը: Բանասարկու ընկերը ուրախացաւ, որ եթէ Վաղարշակին չկարողացաւ բերել, գոնէ Արշակին քաշ տուեց իր հետ: Ճանապարհին Արշակը թէև առ երես ուրախ էր, սակայն սրտով տրտում էր. նա մտածում էր, որ իր վրայ պէտք է բարկանան, նախատեն, հողին գուշակում էր որ այդ առաջին քայլը վտանգաւոր քայլ է, սակայն թնչ արած, նրանք արդէն քաղաքից դուրս էին եկել, բաց դաշտում էին: Արշակը և իր ընկերները պատահեցին իրանց փողոցի տողոց, որոնք վայրենաբար հռհռալով և քաշկուտելով գնում էին գետը. այդ տողոց հետ ընկերացան և խմբով գնացին: Արշակը զգովում էր նրանց խօսքերից և խօսակցութեան բառերից, որոնք յատուկ են միայն սրիկաներին և որոնց կարելի է լսել միայն օղետան գոռներում: Արշակը և իր ընկերները հասան գետը, լողացան, հագնուեցան: Արշակը նոյնպէս հագաւ իր շորերը, ուզեց գլուխը սանրել, նայեց, գրպանում ոչ սանր կար և ոչ պօրտմանը. երկու, երեք անգամ նայեց՝ չկային. դարձաւ հարցրեց իր այդ չոր ընկերներին:

— Տղաք, սանրս և պօրտմանս, որի մէջ 40 կ. փող կար չէք տեսել:

— Չենք տեսել միաբերան ասացին և ոմանք իբր թէ որոնում էին գետեզրումը. վերջապէս չկար: Նրանք գնացին, մտան մի պարսիկի այգի, ուր գողացան մի քանի վարունդ և 5 ֆնտաչափ խնձոր և այն էր որ այ-

դուց շտապում էին փախչել և ահա պարսիկ այգեպանը հողի, հաւտտ հայհոյելով գալիս էր: Ընկերները փախան. Արշակի ոտքը քարի գալով վայր ընկաւ, այգեպանը կատաղած վրայ հասաւ և հէնց ուզում էր խփել, յանկարծ տեսաւ Արշակին, ճանաչեց, որ դա յայտնի Մարալեանների տղան է:

— Տո, գարշելի, չե՞ս ամաչում, էսպէս պակտների հետ ընկեր ես եղել. տօ քո հօր անունից չես ամաչում, դու էսպէսների հետ թնչ բան ունիս:

Արշակը ամօթից և ոտքի ցաւից պասպանձուել էր, չկարողանալով խօսել: Այգեպանը վեր բարձրացրեց, ոտքի արիւնը սրբեց, կապեց, խրատելով ասաց:

— Չէ, որդի, չէ: մէկ արիւր, մէկ էլ մի անիր, քո հօր անունին, ձեր օճաղին վայել չէ, որ դու այդպէս լակոտների հետ ման գաս. թնչ է եղել ձեզ, թնչ է պակաս, խօ կարօտ չէիր մեր խիարներին և խակ խնձորներին: Գնա, որդի, գնա, ամօթ է:

Այդուց քիչ հեռու ընկերները Արշակին սպասում էին. նրանք կարծում էին թէ պարսիկը կ'ըջարդէր Արշակին մի լաւ ծեծելով. երբ Արշակին կաղալով տեսան, զարմացան:

— Արշակ, թնչ ասեց պարսիկը, ի՞նչու ես կաղում, հարցրին:

— Գնացէք, էհ, գուք էլ ձեր պարսիկն էլ. ոտքս պլօկուեց:

Բան չկայ, մեծնաս կ'մոռանաս, ասացին ծիծաղելով: Արշակը շատ տխուր էր, նա մտածում էր, որ չը-

լսեց իր եղբօր խօսքին, ընկերացաւ օտար անարգ տղոց, համ փողերը գողացան, համ ոտքը ցաւեցրեց. հա էլ երեկոյին պէտք է պատժուէր, այս վերջինը աւել յուսահատեցնում էր Արշակին:

— Ինչ ես մոլորուել, լիմար, սիրտ տուեց Գ. Սլէկեանը. ինչո՞ւ ես տխուր, ասա հօրքուրանցս տունն էի քնչ կայ, խօ քեզ մորթելու չեն, ես էլ վկայութիւ կուտամ:

— Շապկիս պատուածներն քնչ անեմ. ասաց Արշակ որորմելի ձայնով:

Ե՛հ, լիմար, վաղը միւս շապիկդ հագիր աղքատ տղայ հօ չես:

— Հապա պօրտմանս:

— Եդ էլ մեծ դարտ չէ, ես իմը քեզ կտամ, փողերըն էլ ասա թէ հօրքուրանց տունը թողի, մոռացայ: Այսպէս լիբը ընկերը սիրտ էր տալիս, համոզում էր սուտ խօսել, խաբել ծնողաց:

Արշակը երեկոյեան ուշ վերադարձաւ: Նրա բազրից պ, Մարալեանը տանը չէր. մի ինչ որ բարեկամի տուն էր գնացել տօնը շնորհաւորելու: Տիկին Մարալեանը շատ բարկացաւ, բայց չձեռնեց. Արշակը ուրախացաւ որ իր չարութիւնը անպատիժ մնաց: Հետեւեալ կիրակի էլի Գալուստի հետ էր. երեկոյին էլի խաբեց թէ քեռանցս տունն էի, առանց խղճահարուելու, որ ծնողայ խաբելը կ'նշանակէ Աստծուն խաբել: Ստախօսութիւնն ու խաբելը սովորութիւն ու բնաւորութիւն դարձաւ Արշակի համար և նա իր ստութիւնները որպէս ուղղ

խօսք հաւատացնելու համար զործ էր դնում նաև երդումն, որը կատարեալ տղի համար ոչ միայն անվայել է, այլ և մեծ ամօթ է և մեղք:

Այսպէս նա մի քանի շաբաթուայ ընթացքում չար ընկերների շնորհիւ սովորեցաւ իր անգի՛ն ժամանակը իզուր կորցնել, ծնողաց խաբել:

Սուտ խօսել, և որ ամենասարսափելին է, սուտ տեղ Աստուծոյ անունը իր բերանն առնել, Աստուծոյ անունով երդում ընել, առանց մտածելու, որ սուտ խօսելը 1) և երդում 2) ընելը մեծ մեղք է և Աստուծմէն խիստ արգելուած:

1) Ստախօսութիւն և սուտ տեղ Աստուծոյ անունով երդում ընելը մեծ մեղք է և կպատժուի Աստուծմէն այս մասին սուրբ Գրքի մէջ կան բազմաթիւ վկայութիւններ, որոնց մի քանիսը այստեղ յիշել ես ինչ սուրբ պարսք եմ համարում:

ա. Մի սուտ խօսիր. տես Նից. Ի. 16:

բ. Քո լեզուն չարութենէ պահէ և չրթունքներդ սուտ խօսելէ: Սաղմոս ԼԳ 13,

գ. Ստութիւնը թողէք և միայն ճշմարիտը խօսեցէք: Նվիս. Գ. 25.

դ. Սուտ չրթունքը Տիրոջ զգուելի է: Առակ. ԺԲ. 20:

Սուտ ի հօրէ սատանայ է: Անդ Ժ. 1:

ե. Ստախօսը և սատանան մէկ հօր որդիք են և մէկ տեղ պիտի այրին: Աւետարան:

զ. Նւ բոլոր ստախօսներու բաժինը կրակով ու ծծմբով վառուած լճի մէջ պիտի լինի որ է երկրորդ մահ. Յայտ. ԻԱ. 8:

2) Ես ձեզի կըսեմ, ամենեւին երդում մի ընէք, ոչ երկնքի վրայ, որ Աստուծոյ արժուն է, ոչ երկրի վրայ, որ Նորա

Անցաւ մի տարի: Ուսումնարանի մէջ վարժապետները նկատեցին, որ Մարալեան Սրշակը ուսման մէջ փոխանակ առաջ գնալու, որ աւուր յետադիմում էր. նախկին ընդունակ, ժիր, առաջադէմ Սրշակը այժմ դասասելիս մոլորուում էր. դասը միտքը չէր պահում, թուաբանութեան մէջ մոլորուում, ապուշի պէս մնում էր. խելքն ու միտքը կորցրածի պէս էր: Իրա հակառակ նա իր խելքն ու միտքը տուել էր չար ընկերներին, որոնց թիւը այժմ կրկնատասուել էր. նրանց խորհրդով նա առնում էր խաղալիքներ, միրգ, կամֆէտ, պապիրոս և այլն:

Զնայելով որ ուսուցիչները հոգով չափ աշխատում էին սովորեցնել, բայց Սրշակը միշտ նույն էր մնում և այդ տարի դասարանն էլ չ'կարողացաւ փոխել, այն ինչ Վաղարշակը յաջողութեամբ անցաւ հետևեալ դասարանը: Սյս հանգամանքը աւելի կատաղեցրեց Սրշակին. «Ինչո՞ւ նա պէտք է փոխէ. իսկ ես ոչ» մտածում էր ինքն իրան և սկսում տեղի թէ անտեղի կուռել ու ծեծել Վաղարշակին:

Սրշակը ինչպէս բնաւորութեամբ, նայնպէս և կազմուածքով այժմ տարբերում էր Վաղարշակից. նա նիհարացել էր, չոր ու ցամաք էր և սակաւարին: Մինչ-

որքերի պատուանդանն է, ոչ Նրուսաղէմի վրայ, որ մեծ թագաւորի քաղաքն է, և ոչ քո գլխի վրայ երգում ընես, որովհետև չես կարող մի մազ սպիտակացնել կամ սևացնել: Հապա ձեր խօսքն ինի այոն՝ այո և ոչն՝ ոչ:

գեռ Վաղարշակը գէր, կլոր և ամրակազմ: Տղոց կուռների ժամանակ ծնողքը միշտ Վաղարշակին էին ծեծում որպէս դիմացկուն տղայի, որն աւելի լրբացնում էր Սրշակին: Տեսնելով որ իր անկարգութիւնները զսպող չունի, խելք ու միտքը տուել էր ոչ թէ դասերի, այլ խաղալիքների, մրգի, ուտելու, ծիծեռնակ կամ ճնճղուկ սպանելու, նրանց բունը քանդելու, անմեղ ձագերին դուրս բերելու: Տան մէջ էլ Սրշակը շատ չար էր: Խեղճ քոյրերը որ չունէին նրա ձեռքից. կամ պէտք է մագերը քաշէր, հազուանստերը պատուէր, կամ պէտք է խաղալիքները ջարդէր և պատճառ դառնար նրանց լացին և արտասուքին: Համոզուելով մի քանի սրիկայ. անկիրթ փողոցային ընկերներին՝ Սրշակը փող էր գողանում մօր սնդուկից և քաղցրեղէնների տալիս, առանց ամաչելու, որ օրինաւոր տան տղի համար ոչ միայն անվայել է, այլ և մեծ ամօթ: Իրսում՝ փողոցի տղոց հետ՝ ամեն օր կուռում էր, շատերը քաշուում էին, չէին ծեծում, վախենալով. պ. Մարալեանի ծառաներից. մանաւանդ Վաղարշակից, որը ուժեղ և ժիր տղայ էր, սակայն Սրշակը երբ ինքը չէր կարող ծեծել, գոնէ իրենց ծառաներին էր ծեծել տալիս, որի պատճառաւ էլ շատ թշնամիներ ունէր: Լաւ է ասել, որ Սրշակը այժմ ոչ ոքի սիրելի չէր, ոչ ոք նրան չէր համակրում, ոչ ոք նրա լաւը չէր կամենում: Եթէ կար մէկը, որ սիրում էր Սրշակին, դա էր նրա մայրը, տիկին Համասիւհուր:

506
505
504



պեցին, գլխին սպեղանի գրին: Վերջապէս երեկոյեան ժամը 6-ին Արշակը աչքերը բացեց:

— Արշակ ջան, քնչպէս եր—հարցրեց տ. Մարալեանը մայրական արտասուքը արեկով:

— Կաւ եմ, մայրիկ ջան: — Ախրը այդ փորձանքը բու գլուխն քնչպէս եկաւ,

Արշակ ջան, — հարցրեց պ. Մարալեանը: — Արշակը ոչինչ չըպատասխանեց.

նա ոչինչ չէր յիշում, բայց խիղճն տանջում էր: Նա գիտէր, որ իր լրբութեան և չարութեան համար պատժուեցաւ Աստուածանկից:

Ամբողջ երեք ամիս Արշակը մնաց պառկած: Ամեն օր երեք բժիշկ գալիս գնում էին: Պ. Մարալեանին շատ ցաւ եղաւ, երբ 400 ռ. փող մսխելուց յետոյ էլի Արշակի ոտքը կաղ մնաց:

Նա ինքն իրան կատաղում էր, երբ մտածում էր, որ Արշակը թողեց ուսումնարանը,

թողեց աշակերտաց անմեղ ընկերութիւնը, գնաց անպիտան, փողոցի երեխաների ետեւից, որ և մազ մնաց մեռնելու և այն էլ մի-երկու ճնճողկի ձագի համար մինչև մահ կաղ մնալու էր:

Արշակն իր չար բնաւորութիւնը չըփոխեց, այդ փորձանքը խրատ չեղաւ, կրկին շարունակեց առաջուայ կեանքը:

Կիսատ թողեց Հայոց դպրոցի դասընթացը մտաւ գիմնազիան: Այնտեղ մնաց հինգ տարի և իբր թէ կրտսովորէր.

կաֆետներ, ըեստօրաններ աւելի սիրով կերթար քան, թէ գիմնազիան: Գիմնազիանն էլ կիսատ թո-

Է.

ղեց: Եհ, այստեղ ինչ կայ, գնամ Մոսկւայ, այնտեղ շըրջանը մեծ է, մայրաքաղաք է, վարժապետներն աւելի ուսեալ են, երեսպաշտութիւն չեն անիլ. մէկ խօսքով Մոսկւայ, անպատճառ Մոսկւայ: Այդ դիտաւորութիւնը տ. Մարալեանը յայտնեց մարդուն:

Արշակ, որդի, էդ քնչ Մոսկւա առել-անցել ես. մէկ գիմնազը վերջացրու, կուզես Մոսկւա գնա, կուզես արտասահման:

— Արտասահման չեմ ուզում. Մոսկւայ, անպատճառ Մոսկւա: Հնար չըկար. խեղճ ծնողները նրան Մոսկւա ղրկեցին: Նա մտաւ առաջ Լազարեան ճեմարանը,

այնտեղից էլ դժգոհ էր: Բոլոր ընկերները վատ էին, վարժապետները նոյնպէս. թշուառ չըգիտէր՝ որ ինքն էր վատ, ինքն էր հոտածու գարշելի: Ամբողջ եօթը տարի Մոսկւայի մէջ քարշ եկաւ, մտաւ գիմնազիան էլ, նկարչութեան ուսումնարան էլ, երաժշտութեան էլ, ամեն տեղ մնում էր մի կամ երկու տարի, ամեն տեղից վաճաղում էին մերժում էին.

Եւս քնչ անօրէն, գազան մարդիկ են, իմ փողովս ինձ չեն կարգացնում, սա քնչ լրբութիւն է, մտածում էր ինքն իրան Յ, НУ ВХЪ КЪ ЧЕРТУ. մի օր ասաց ինքն իրան Արշակը. թքել եմ սրանց ուսումին էլ, ուսուցիչներին վրան էլ և դուրս եկաւ:

Ինքը չիմար, փողը շատ Մոսկւայի մէջ... էլ ըեստօրան չըմնաց, որ չըգնար, կաֆէ տներ չըմնաց, որ չըմտնէր, անառականոց չմնաց, ուր նրա ճոխ քսակը չըբացուէր... նա ընկել էր անառակութեան, լրբութեան ծովը և կըլողար առանց մտածելու իր սոսկալի ապագայի մասին:

Ինքը չիմար, փողը շատ Մոսկւայի մէջ... էլ ըեստօրան չըմնաց, որ չըգնար, կաֆէ տներ չըմնաց, որ չըմտնէր, անառականոց չմնաց, ուր նրա ճոխ քսակը չըբացուէր... նա ընկել էր անառակութեան, լրբութեան ծովը և կըլողար առանց մտածելու իր սոսկալի ապագայի մասին:

Ինքը չիմար, փողը շատ Մոսկւայի մէջ... էլ ըեստօրան չըմնաց, որ չըգնար, կաֆէ տներ չըմնաց, որ չըմտնէր, անառականոց չմնաց, ուր նրա ճոխ քսակը չըբացուէր... նա ընկել էր անառակութեան, լրբութեան ծովը և կըլողար առանց մտածելու իր սոսկալի ապագայի մասին:

Ինքը չիմար, փողը շատ Մոսկւայի մէջ... էլ ըեստօրան չըմնաց, որ չըգնար, կաֆէ տներ չըմնաց, որ չըմտնէր, անառականոց չմնաց, ուր նրա ճոխ քսակը չըբացուէր... նա ընկել էր անառակութեան, լրբութեան ծովը և կըլողար առանց մտածելու իր սոսկալի ապագայի մասին:

Ինքը չիմար, փողը շատ Մոսկւայի մէջ... էլ ըեստօրան չըմնաց, որ չըգնար, կաֆէ տներ չըմնաց, որ չըմտնէր, անառականոց չմնաց, ուր նրա ճոխ քսակը չըբացուէր... նա ընկել էր անառակութեան, լրբութեան ծովը և կըլողար առանց մտածելու իր սոսկալի ապագայի մասին:

Ինքը չիմար, փողը շատ Մոսկւայի մէջ... էլ ըեստօրան չըմնաց, որ չըգնար, կաֆէ տներ չըմնաց, որ չըմտնէր, անառականոց չմնաց, ուր նրա ճոխ քսակը չըբացուէր... նա ընկել էր անառակութեան, լրբութեան ծովը և կըլողար առանց մտածելու իր սոսկալի ապագայի մասին:

Ինքը չիմար, փողը շատ Մոսկւայի մէջ... էլ ըեստօրան չըմնաց, որ չըգնար, կաֆէ տներ չըմնաց, որ չըմտնէր, անառականոց չմնաց, ուր նրա ճոխ քսակը չըբացուէր... նա ընկել էր անառակութեան, լրբութեան ծովը և կըլողար առանց մտածելու իր սոսկալի ապագայի մասին:

Ինքը չիմար, փողը շատ Մոսկւայի մէջ... էլ ըեստօրան չըմնաց, որ չըգնար, կաֆէ տներ չըմնաց, որ չըմտնէր, անառականոց չմնաց, ուր նրա ճոխ քսակը չըբացուէր... նա ընկել էր անառակութեան, լրբութեան ծովը և կըլողար առանց մտածելու իր սոսկալի ապագայի մասին:

Ինքը չիմար, փողը շատ Մոսկւայի մէջ... էլ ըեստօրան չըմնաց, որ չըգնար, կաֆէ տներ չըմնաց, որ չըմտնէր, անառականոց չմնաց, ուր նրա ճոխ քսակը չըբացուէր... նա ընկել էր անառակութեան, լրբութեան ծովը և կըլողար առանց մտածելու իր սոսկալի ապագայի մասին:

որ տեղի ունեցաւ 70 տարեկան Հասակում, օրհնեց Վաղարշակին, ինչպէս օրհնել էր Իսահակը Յակովբին: Հօր օրհնութիւնը հասկացողի համար. միլիօն արժէ: Վաղարշակը շատ մեծ պատուով և շքեղ յուղարկաւորութեամբ թաղեց իւր հօրը և նրա յիշատակը յաւերժացնելու համար. մի գիշերօթիկ ձրիավարժ ուսումնարան բացեց որը տղայոց համար: Ուսումնարանում այդ տարի կարգում էին 125 որը տղաներ, օրհնելով Վաղարշակի կեանքը և աղօթելով հանգուցեալ Մարալեանի հոգու փրկութեան համար:

Վաղարշակ Մարալեանը տեսնելով որ առևտրական գործը միայնակ չի կարելի կատարել, իսկ գործակատարների ձեռք էլ այն պայծառ գրութիւնը չի ստանալ, վճռեց Ֆիրման ծախել. այդպէս էլ արաւ. ծախեց իր բարեկամ Արարատեանին 60 հազար ըուբլով: Այդ փողից իր համար վերցրեց 10 հազարը, իսկ մնացածը դրեց արքունի բանկը, որի տոկոսով մայրն ու քոյրերը փառաւորապէս ապրում էին: Անշարժ կալքերի կառավարութիւնը լանձնեց մօրը՝ տիկին Համասփիւռին, որ շատ ժիր ու գործունեայ կին էր: Այսպէս խելացի կարգադրելով, նա ուղևորուեցաւ Ս. Պետերբուրգ բարձրագոյն ուսում առնելու նպատակով:

Ժ.

Վաղարշակ Մարալեանը մտաւ համալսարան, և մնաց երեք տարի: Յաջողութեամբ աւարտեց այդ բարձրագոյն դպրոցը և ստացաւ բժշկի վկայական որպէս

բժիշկ, նա ծառայեց Օրլովի նահանգում և Ժողովուրդը նրան սրբի պէս պաշտում էր: Նա հէնց մանկութիւնից սիրելի էր ծնողացը, դրացիներին, Հայոց դպրոցում, Գիմնազիայում, առևտրականներին, վերջին էլ համասարանում: Թէ ընկերները, թէ պրօֆեսորները, նրան շատ սիրում էին: Իսկ Օրլովի նահանգում, ինչպէս ասացի, սրբի պէս պաշտում էին: Տուած երգումին համաձայն նա շատ բարեխղճաբար կատարում էր իր պաշտօնը. նրա ընդունարանում հաւասար իրաւունքով գալիս էին թէ ազնուականները և թէ ուսմիկները: Նոյն անուշ լեզուն, նոյն քաղցր ժպիտը չէր հեռանում նրա քաղցր դէմքից, նա այնպէս չէր, ինչպէս շատ բժիշկներ, որոնց աչքը մարդու ջէբն է. սա մեծ մասը ձրի էր բժշկում:

Նոյն իսկ հարուստներն էլ ժլատութեամբ չէին վճարում և բժ. Մարալեանը ոչ մի դժգոհութիւն չէր յայտնում և դրա համար նրան ամենքը սիրում և պաշտում էին գրեթէ սրբի պէս: Մի գեղեցիկ օր պ. բժիշկ Մարալեանը յայտնեց իր ծանօթներին, որ միտք ունի Ս. Պետերբուրգ գնալու բժշկապետութեան քնննութիւն տալու: Մայիսեան գեղեցիկ օրերից մէկն էր: Օրով քաղաքի ազնուականութիւնը խորին վշտով ճանապարհում էր իր սիրելի բժշկին: Վերջին «մնանք բարեաւի» ժամանակ պ. Մարալեանը շատ զգացուեցաւ: Նրա գործունեութեան առաջին ասպարէզը Օրլովն եղաւ: Օրլովն էր իր անունը հռչակողը և այժմ պէտք է թողնէր ու երթար: Հասարակութիւնը տուեց մի ուղերձ 2000 ստո-

րագրութեամբ, նաև մի ոսկի սուրճ այս մակագրութեամբ, իւր սիրելի քաղաքային բժիշկ Վ. Թ. Մարալեանին Օրլով քաղաքի շնորհակալ ժողովրդէից»։ Վաղարշակ Մարալեանը Ս. Պետերբուրգի կայսերական բժշկական համալսարանում կեցաւ էլի մի երկու տարի։ Վերջին տարին՝ նա պրոֆեսորների և բժշկապետների ներկայութեամբ՝ պաշտպանեց իր գրած գիտնական աշխատութիւնը, որ հաւանութեամբ և շնորհակալութեամբ ընդունեցաւ։ Պրոֆեսորների ժողովը վրձուեց բժշկապետի աստիճան տալ պ. Վ. Մարալեանին։ Այսպէս աշխատասէր Վաղարշակը հասաւ բժշկապետի աստիճանին։ Պրոֆեսորները շնորհաւորեցին պ. Մարալեանի բարձր աստիճան ստանալը։ Վերագառնալով Ս. Պետերբուրգից բժշկապետ Մարալեանը՝ Աստրախանում պսակեց մի ազնուական հայ օրիորդի հետ, որը ունէր ազնիւ տիկնոջ բոլոր յատկութիւնները։

Այժմ բժշկապետ պ. Մարալեանը Մ. քաղաքում աղջկա և առողջ է, նոյն պարզ, զուարճախօս, անուշ բնութեամբ. նրա ամուսինը՝ տ. Վառվառէ Մարալեանը մի պարկեշտ, առողջ, խելացի կին է, և չորս հրեշտակաման որդոց մայր։

Ինչպէս Օրլով քաղաքում, նոյնպէս Ս. քաղաքի բնակիչները սրբի պէս պաշտում են բժշկապետին, ամեն օր լիքն են նրա մօտ և նա իր տիրոջ Յիսուս Քրիստոսի պէս ամենքին բախիւ է առողջութիւն՝ փաբատելով ցաւերը և բժշկելով ժողովրդի հիւանդութիւնը։

ՎԱՐՏԱՔԱՆ

Միրելի ընթերցող, այս «Երկու Եղբայր» անունով պատկերը ձեզ պատմելուց յետոյ, ես կուզեմ մի փոքրիկ վերջաբանով փակել։ Գրքոյկիս նիւթը իրական կեանքից է։ Արշակներ ու Վաղարշակներ ամեն տեղ, ամեն քաղաք լիքն են, և միշտ կրլինին։ Մէկը՝ որպէս առաքինու թեան հետևող՝ կրփառաւորուի, միւս՝ որպէս մոլի՝ կրփչանայ։ Միթէ Արշակն եթէ ուզենար՝ ինքն էլ չէր առաքինի լինիլ. կարծեմ որ ամեն մարդուն Աստուած խելքէ տուել՝ չարն ու բարին ջոկելու, երբոր պարզ ճանապարհը կայ, ու մենք զնուսմ ենք քցել խերի ու ճահիճների մէջ, արդեօք մենք ենք մեղաւոր, թէ ուրիշները, գիտենք, որ արբեցութիւնը կեանքի թոյն է և քաղաքի մէջ հարիւրաւոր օղետներ կան, եթէ մենք մեր ոտքով չերթանք, արդեօք մեզ բռնութեամբ ներս կը քաշեն, արդեօք բերանները զօրով օղի ներս կը ցնեն. քաւ լիցի։ Մենք որ մեր ոտներով գնում և քակները բանալով աղաչում ենք. — «Պարոն, մեզ թոյն տուր», և նա մեղաւոր չէ, երբ ծախում է։ Արբեցութիւնից ջոկ՝ կան շատ տեսակ մոլութիւններ, ինչպէս, թղթախաղ, անառակութիւն և այլն։ Սակայն այդ բոլորն էլ մեր ձեռքով է կատարուում։ Արշակի վարքը թող օրինակ լինի ձեզ, կաղաչեմ, մասաղ ընթերցողներ, հեռու կացէք չար ընկերներից, որոնք սկզբում անմեղ ազաւնի են երևում, յետոյ՝ օձի պէս խայթում, Ս.մեն մարդ, որ խեղճ ու թշուա է մնացել, բոլորը չար ընկերի պատճառով է։ Եթէ դուք էլ չար ճանապարհի վրայ էք, որ ձեզ անպատճառ կորուստ կը տանի, աշխատեցէք յետ

կենալ անառակ որդու պէս ասելով: «Քանի՛ վարձկանք
իցեն 'ի տան հօրիմոյ հացալիցք, և ես աստ սովամահ
կորնչիմ:

Եթէ Սրշակն էլ Մոսկւայի մէջ մտաբերէր այդ հրա-
շալի օրինակը, իսկոյն յետ կրդառնար, կրգար հօր ոսքը
կընկներ՝ ասելով. «Հայր, մեղալ յերկինս և առաջի քո»:
Բայց չեկաւ, մնաց գարշելի ընկերութեան մէջ և անբա-
րոյականութիւնից փչացաւ. Եւ նա, ոչ այս աշխարհում
կեանքի քաղցրութիւն առաւ, ոչ էլ ծնողաց օրհնութիւնը.
Իւր բազմաչարչար հոգին հայրենական յարկից շատ
հեռու աւանդեց և ոչ մարդավայել ապրուստ ունեցաւ
Եւ այսպէս առանց հրամանի և հրաւերի՝ գնաց ներկա-
յացաւ Սասժոյ ահեղ ատեանին, որի պարզեւած այնչափ
բարիքն ու շնորհը մոլութեամբ վատնել ու կորցրել էր
առանց մտածելու, որ մարդս պարտական է ամեն գոր-
ծին հաշիւ ու համար տալու: Եւ այս ամենը նրա հա-
մար, որ չուզեց լաւ լինել, եթէ ոչ նրան ոչ ոք արգելք
լինելու չէր, ընդհակառակը՝ հանգամանքները շատ նը-
պաստաւոր էին:

Ես կրվերջացնեմ իմ այս գրքոյկը Սատուածային
խօսքերով. «Եղերո՞ւք կատարեալք, որպէս և Հայրն ձեր
երկնաւոր կատարեալ է»:

Հ. ՄԱՐԿՅԱՆ ԳՐԱԳՐԱՆՈՒԹՅԱՆ
ԳՐԱԳՐԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐՈՒԹՅԱՆ
77/11. 1922
Հ. ՄԱՐԿՅԱՆ

<< Ազգային գրադարան

NL0351605

47653

891. 99

7-64